որ բնական է անոնց համար որք ցա-
մաքէն կը հեռանան, դէպ ի անհուն,

ՊԱՇՏՈՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆԻ
ԱՍՏԻՃԱՆԻ ԵՒ ՊԱՏՈՒՆՇԱՆԻ

Տրապիզոնի ձանիկ գաւառին կա-
ռավարիչ անուանուեցաւ Ատանայի
իւ իւ գաւառին նախորդ կառավա-
րիչ Նուսուհի պէյ:

Լահէյի օսմանեան պատուակալ
հիւպատոս անուանուեցաւ հոլանտայի
Պ. Պէնեան վեյի:

Սալիսի աստիճան տրուեցաւ Վա-
նայ Որամար գաւառակալին գայմադամ
Ալի Շէվքէզ Էֆէնտիի:

Առաջին կարգի Շէֆադաթ պատ-
ուանշան տրուեցաւ Վիէնայի օսման-
եան դեսպան Սաատուլահ փաշայի
կնոյ:

Երկրորդ կարգի Մէճիտիյէ պատ-
ուանշան տրուեցաւ կայս. պալատան
կրօնական պաշտօնաւսնային Սբարթա-
լը Ապտիլքէրիմ Էֆէնտիի և կայս.
պալատան գեղարարական պետ Շէֆիզ
աղայի:

Երրորդ կարգի Օսմանիյէ Որբանո-
ցի տնօրէն տեղակալ-գնդապետ Հիւ-
սէյին պէյի:

Երրորդ կարգի Մէճիտիյէ ոստի-
կանութեան քննիչներէն Պ. Պէրթո-
մէնի:

Չորրորդ կարգի Մէճիտիյէ կայս.
պալատան սպասաւորներէն Հաճի Հիւ-
սէյին Էֆէնտիի և Լուսթի ու ծափէր
աղաներու:

Չորրորդ կարգի Մէճիտիյէ Դա-
մասկոս յոյն գրագէտ Իսթէրէֆիս
Էֆէնտիի:

ՀԵՌԱՅԻՐ ՎԱՆԷՆ

Այս առուր Թաթի մէջ կը կարդանք
հետեւեալ հեռագիրը Վանէն, որ Վեհ-
Սուլթանին մատուցեալ ուղերձի մը պատ-
ճէնն է.

«ՎԱՆ, 27 մայիս.

«Մօտերս օտար լրագրիք ունիւք Հա-
յաստանի հարստահարութեանց անուամբ
զրպարտութիւններ և թշնամական լուրեր
և յօդուածներ հրատարակեցին, իրր թէ
մահմետական Պէյեր և Աղաներ չէրքէս
գերուհիներ չգտնելով այլ ևս, հայ աղ-
ջիկներ կը գրաւեն բռնի և իրենց կա-
նանոցին մէջ կը մուծանեն, և կառա-
վարութիւնն իսկ կը մասնակցի այս չա-
րագործութեան: Հրատարակեցին նաեւ
թէ բարեկարգութիւնն ու հանդար-
տութիւնը խանգարուած են, Բրդաց
և Հայոց միջեւ թշնամութիւն կայ ըստ
առաջնոյն, միշտ Գուրգէր Հայեր կը սպան-
նեն, և բազում ձերբակալութիւնք եղած
են ի վան, և թէ միջոցներ ձեռք առ-
նուլ պէտք է իրաց այս վիճակին դարման
տանելու համար: Յաւ ի սիրտ իմացանք
որ այս հրատարակութիւնք ինչ ինչ ժո-
ղովներու և ակումբներու մէջ վիճարանու-
թեան նիւթ են եղեր: Բայց այս հրատա-
րակութիւնք բոլորովին ստացօք են:
Պէյերն և Աղաներն ո՛չ մէկ հայ աղջիկ ա-
ռած տարած են ակամայ, և ո՛չ իսկ կա-
մաւ: Մեր առեւտուրը հայրենակցական
սիրով տեղի կ'ունենան բովանդակ
մահմետական ժողովրդեան եւ մանա-
ւանդ գանգաւորալ Բրդաց հետ: Ըն-
չից եւ կալուածոց սեփականութեան
մէջ և ուրիշ ամեն գործառնութեանց
մէջ կատարեալ հաւասարութիւն կը վա-
յելենք, եւ բնաւ հակառակութիւն
կամ թշնամութիւն ծագած չէ: Եւ թէ-
պէտ ըստ արժանեոյն չէ հասկցուած «ձեր-
բակալութեանց» նպատակը, ի վնաս ո՛չ
մի կողմին բռնութիւն կամ կեղեքում ի
ձգործ դրուելը լուծած չէ:

Այս ստացօք հրատարակութեանց թըշ-
նամական նպատակն է պաղեցնել այն եւ-
թովեան Տէրութիւններն և ժողովուրդ-
ներն որք բարեկամ են Օսմ. Տէրութեան,
և չ'առաջնորդել զրկել Վեհ. Սուլթանին
հայրենական գթութենէն և ողորմութե-
նէն: Եւ իրենց բովանդակ յոյսը դրած
են յիշատակութեան գթութեան վրայ:
Ուրիշ ո՛չ մէկու կը դիմեն, ո՛չ մէկու պէտք
ունեն: Ծնորդիւ Ն. Կ. Վեհափառութեան:

այս կողմեր կատարեալպէս հանդարտ եւ
բարեկարգ են: Նահանգին կուսակալ Պա-
լի պէյ ծառայելիք հաւատարմ, ուղղա-
միտ, յառաջդիմաւոր և արդարաւոր մարդ
է: Հանդարտութիւնը պահպանելու այն-
չափ հոգ կը տանի, և ամենափոքր անի-
րաւութիւն մը լսելուն պէս արդարու-
թիւնն ի գործ դնելու համար ա՛յնչափ
փութալանութիւն կը ցուցնէ որ հայ ծա-
ռայքս ամեն օր կ'աղօթենք Վեհ. Սուլ-
թանին բարօրութեան համար: Ո՛ւր կը
մնայ յիշեալ լրագրաց խօսքը թէ այս կող-
մեր հարստահարութիւնք կը գործուն
եղեր:

«Յիշեալ հրատարակութիւններն հեր-
քելու և այս առթիւ մեր հաւատարմա-
կան անխախտ զգացումներն անգամ մ'էս
հաստատելու համար, յանուն Վանայ նա-
հանգին համայն ժողովրդեան այս ու-
ղերձն ստորագրեցինք, որոյ ընդունելու-
թիւնը կը հայցենք խոնարհաբար:»

(Մարտիրոս-Քէնէ)

Ստեփան վարդապետ, Գանտոնեան,
Նիզամեան, Նալպատեան, Արաւա-
եան Ակոր, Ալեմեան, Գալեան, Կէօմ-
րիւքեան, Գալիքեան, Կէօմլեան, Թար-
գօլեան, Տէր Պողոսեան, Պարսաեան,
Միւրիշեան, Մուրաթեան, Տէր Բարսեղ-
եան, Տէր Արութեան, Գալեան, Պար-
սաեան Անտոն, Ճանկորեան Ակոր, Սէմէր-
ճեան, Տէր Արմենեան, Յակոբ Կարապետ-
եան, Կիւլլապեան, Տէր-Արթիւնեան Պողոս,
Շաթօ Տէրեան Ռուբէն, Վարդանեան
Մարտիրոս, Մարտիրոս Արթիւնեան, Հաճի
Պաղտատարեան, Սապունճեան Սարգիս,
Շահօհիսեան Ակոր, Պողոս Վարդանեան,
Աւետիս Մալեմեան, Չուսապետեան,
Ակոր Պաւտադեան, Պէրպէր Սէպեպեան,
Քէշիշ Օհանէսեան, Արթիւնեան, Աւետիս-
եան, Արաւեան, Թարգոլեան, Օհանէս
Ակորեան, Ֆիլիս Եղեղեան, Միւստեան,
Տէր-Արթիւնեան, Բարսեղեան, Աւետեան,
Միւստ Ճէօտաճեան, Մարկոս Տէր-Արթիւ-
նեան, Մելքոն Օհանէսեան, Արաւեան,
Տիգրան Պաղապեան, Ալեքսանեան, Սար-
գիսեան, Օհանէս Միլիտեան, Գալիքեան,
Բէրքաւարեան, Տէր-Պողոսեան, Տէր-Օ-
հանէսեան, Հաճի Արթիւն Նաթանեան,
Ատոմ Գալիքեան, Գրիգոր Մէրճանեան,
Սապունճեան, Պէյլիքեան, Լալասեան,
Օբէրիկեան Կարապետ, Աւետիս Լօյպեան,
Գէորգ Պաշտաւորեան, Ռուսիս Մալիքիարի,
Սիմոն Լէյլեյրեան, Միքայէլ Չուսեան,
Օհանէս Լարոտանեան, Մէհանեան, Միլը-
տիշեան, Եթովիզ Եղեղեան, Գէորգ
Կարապետեան, Հանքեան, Ագրիպատեան,
Կարապետ Միլիտեան, Տէրպողոսեան Օ-
հանէս, Պօեալիսանէճեան, Մալիտաեան,
Հասրեղեան, Սահակ Եւստոֆեան, Օհա-
նէսեան, Վարդան Օհանէս, Իմիրեան,
Աւետիսեան, Սիմոն Աւետիսեան, Քէշ-
րաբեան, Պիշեան, Տէր Արթիւնեան, Գալ-
եան, Օհանէս Կարապետեան, Բարսեղ-
եան Սարգիս, Սիմադեան Կարապետ, Ա-
ւետիսեան Կարապետ, Տէր Արթիւնեան
Միլիտեան Վարդանեան, Վարդանեան Ար-
թիւն, Պէրպէյմեան, Օհանէս Կէօմլեք-
ճեան, Սմարեան Արթիւն, Օհանէս Թար-
դանեան, Արթիւն Մալեպեան, Ակոր Փէր-
թեան, Արաւճամ Օհանէսեան, Օհա-
նէս Կէօմլեքճեան, Վարդան Մարտիրոս-
եան, Գրիգոր Վարդանեան, Օհանէս
Թէրէմէզեան, Արաւճամ Վարդան Ար-
լանեան:

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԴԵՍՊՈՒՆ

Ռումանական դեսպան Պ. Միլի-
լինէօ երէկ ժամ 9ին կայս. պալատ
երթալով Վեհ. Սուլթանին ներկայա-
ցաւ և իւր յանձնարարագրերը մա-
տոյց:

Խարիճիյէի արարողապետ Իպրա-
հիմ պէյ ժամ 8ին պալատական կառ-
քերով ի Բերա ռումանական դեսպա-
նատունը գնաց և քիչ յետոյ կայս.
պալատ առաջնորդեց դեսպանն ու
իւր հետեւորդներն, որք բոլորն ալ
պաշտօնական համազգեստ կը կրէին:
Դեսպանը նոյնպէս կախած էր առաջին
կարգի Մէճիտիյէ պատուանշանը զոր
ուրիշ տարի առաջ ստացած էր և
Ռումանական Թաթ պատուանշանի երկ-

րորդ աստիճանը: Պ. Միլիլինէօ կայս.
պալատ ժամանելուն ընդունուեցաւ
արարողապետ Միլիլին փաշայի ու այ-
լոց կողմէ և պահ մը հանգիստ առնելէ
յետոյ Վեհ. Սուլթանին ներկայանա-
լու պատիւն ունեցաւ: Պ. Միլիլինէօ
իւր յանձնարարագրերն յանձնելով
արժանացաւ Ն. Վեհափառութեան
մեծարանաց:

Ունկնդրութեան միջոցին թարգ-
մանի պաշտօնը կատարեց Արտաքին
գործոց նախարար Սայիտ փաշա: Ուն-
կնդրութենէն յետոյ դեսպանին ու
իւր հետեւորդք պալատական կառքե-
րով Բերա վերադարձան:

ՕՍՄԱՆԵԱՆ ՆԱԽԱՏՈՐՄԻՂ

Ըստ մեր մասնաւոր տեղեկութեանց,
բոլորովին անհիմն է Լոնտոնի լրագրաց
ոմանց այն լուրը թէ Վեհ. Սուլթանն
հրամայած է որ Անգլիոյ ծովային ըս-
պայներէն Լորտ Չարլս Պէրէսֆորտ օս-
մանեան ծառայութեան մէջ մտնէ ըս-
տանձնելու համար օսմանեան նաւա-
տորմին վերապետութիւնը և թէ անգ-
լիացի ծովակալը չէ ընդունած այս
պաշտօնը:

ՎԱՆՄ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱ

Գոհութեամբ կ'իմանանք թէ Ար-
տաքին գործոց նախարարութեան խոր-
հրդական ծառայեան Վանմ. Յարութիւն
փաշա, որ մէկ քանի օրէ ի վեր հի-
ւանդ էր, բոլորովին ապաքինած լի-
նելով, նախընթաց օր կայս. պալատ
գնացած և շնորհակալութիւն յայտ-
նած է այն հոգաւորութեանց համար
զորս իւր հիւանդութեան միջոցին
Վեհ. Սուլթանը ցոյց տուած էր:

Ն. Վանմութիւն Մեծ Կղզի պիտի
երթայ օգոստոսութեան համար:

ԿԱԼՈՒՄԵՍԿԱՆ ՏՈՒՐԳ

Վերջեւս հրատարակուած պաշտօ-
նական ազգ. մը ծանուցած էր թէ
կայս. հրամանաւ 1300 տարիէն մինչև
1304 տարւոյ վերջն Կ. Պոլսոյ կալ-
ուածական արոց համար ամաթոշակի
Սեփէներ և այլ և այլ Սեփէներ պիտի
ընդունուին և թէ այս գործողութեան
համար, որ այժմ կը շարունակուի, մին-
չև ներկայ տարւոյ օգոստոս ամսոյ
վերջն պայմանաժամ գրուած էր:

Արդ, պաշտօնական նոր ազգ. մը
կը ծանուցանէ թէ անոնք որք մինչև
այդ պայմանաժամու լրանալը կ'ըն-
դունան կալուածական տուրքը «Սեփէներու»
ու «Սեփէներու» միջոցաւ չ'վճարեն, ի
լրանալ այդ պայմանաժամու պիտի
ստիպուին հնչուն դրամով հատուցա-
նել զայնս:

ԿԻՊՐՈՍԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Կիպրոսէն կը գրեն առ Թաթի թէ
պատուիրակութիւնն որ պաշտօն ունի
երթալ անգլիական կառավարութեան
հաղորդել ժողովրդեան տրուող շնորհ
ընդգէմ կղզւոյ վարչութեան, անց-
եալ շաբթու մեկներ է ի Լոնտոն Պատ-
ուիրակութեան կը նախագահէ կղզւոյն
մատարակութիւն Գեր. Տ. Սոփրոնիոս:
Պատուիրակութիւնը կը բաղկանայ ե-
րեք քրիստոնեայ անդամներէ: Ժողո-
վուրդն 900 ոսկի տուած է նոցա իբր
ճանապարհորդութեան ծախք:

ՍՈՒՐԻՈՑ ԵՐԱԹՈՒՂԻՐ

Այսերական կառավարութեան նոր
նիւրագիր մը մատուցուած է ի Պա-
ղեստին և ի Սուրիա երկաթուղեաց
հաստատման համար: Խնդրագիրը ներ-
կայացնողն է Պ. Գոլաս, որ կ'առա-
ւաճարկէ իւր ծախիւք հարկ եղած
ուսումնասիրութիւններն ընել՝ կայս-
րութեան այդ երկու նահանգաց մէջ
երկաթուղեաց կատարեալ ցանցի մը

հաստատման համար, պայմանաւ որ
նախապատուութեան իրաւունք պի-
տի ունենայ ուրիշ ամեն արտօնատէրի
վրայ: Այս ուսումնասիրութիւններն
աւարտելէ յետոյ, յատակաձեւերը պի-
տի մատուցուին կառավարութեան, որ
ազատ պիտի ըլլայ ընտրելու երկա-
թուղեաց այն մասերը զորս պատշաճ
կը համարի Պ. Գոլասի յանձնել ի չի-
նութիւն:

ԹՈՒՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ասկից առաջ, Վեհ. Սուլթա-
նին առաջին սենեկապետ Օսման պէյ
մեհաշնորհ ստացած էր մայրաքաղա-
քիս մէջ թուղթի գործարան մը հաս-
տատուելու համար: Արդ, Ն. Վանմու-
թիւն այդ գործարանի կառուցման
համար ժամանակէ մը ի վեր կը բա-
նակցի անգլիացի մասնագիտաց ոմանց
հետ և բանակցութիւնք ի մտոյ պա-
հանջուած արդիւնքը պիտի տան:

Կը հաւատեն թէ, կ'ընէ Հաֆէթ-
պադ գործարանի հաստատման համար
աւելի Պէյքօղլի շրջակայքը յարմար
գտնուած է, որովհետեւ թղթի գոր-
ծարանին ամենէն գլխաւոր պէտքն
յստակ շուրն է:

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԻԹՈՍՏՈՒՐ

Ամերիկեան կառավարութեան խնդ-
րանաց համաձայն, Վեհ. Սուլթանը
թոյլտուութիւն շնորհած է որ Պաղ-
տատի մէջ ամերիկեան հիւպատոսու-
թիւն մը հաստատուի: Հետեւաբար
Պաղտատի ամերիկեան հիւպատոս ան-
ուանուած է Պ. Փոն Հէնրի Հէնս և
Բ. Գուռը վաւերացուցած է նորա
պաշտօնը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԵՍՊՈՒՆՈՒԹԻՒՆ

Կարնոյ անգլիական հիւպատոս
գեղապետ Հէրպերթ Չարլզ Չէրմայտ
Կ. Պոլսոյ անգլիական դեսպանատան
ղեկավարական կցորդ անուանեցաւ, փո-
խանակ թրոթթըր հաղարարեալն որ
Անգլիա կը վերադառնայ:

ՄԷՀՄԷՏ ՐԱԹԻՊ ՓԱՇԱ

Շաբաթ օրը մեծ հանդիսիւ տեղի
ունեցաւ եգիպտացի Մէհմետ Րաթիպ
փաշայի միւշիքութեան աստիճանը վա-
ւերացնող կայս. Մէհմետի ընթերցու-
մը, Բրէնս Հիւսէյին փաշայի ծովային
ապարանքին մէջ ի Սթենիա: Ներկայ
գտնուեցան բարձրաստիճան պաշտօ-
նատարք ոմանք, որոց չորեք սեղան մը
տրուեցաւ:

ԵՐԱԹՈՒՂԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Պոլսոյ Առեւտրական սենեակն ըս-
կած է թուրքերէն եւ ֆրանսերէն
լեզուաւ Երեմիոն Զաթէ-անուն
ամուսական թերթ մը հրատարակել, որ
կը պարունակէ երկրագործական ար-
հեստին վերաբերեալ այլ եւ այլ
օգտակար տեղեկութիւններ:

ՕՏԱՐ ԼՐԱԳԻՐԻ Ի ԹՈՒՐԻՅԱ

Պէրնի տիեղերական թղթատարա-
կան Միւլութեան միջազգային Սենեակը
վիճակագիր մը հրատարակած է, ուս-
կից կ'երևի թէ ի Թուրքիա ներմուծ-
եալ եւրոպական լրագրաց թիւն հըն-
դապատկած է 1886 յունվար 1էն
մինչև 1889 յունվար 1: Վիճակա-
գիրը կը յաւելու թէ այս ներածում
հետզհետէ կ'աւելնայ տարւոյս սկիզ-
բէն ի վեր:

Մանչեսթըր այս իրողութիւնը յիշելով
գիտել կուտայ թէ պաշտպան դրու-
թեան սկզբանց հակառակ է օտար
արտագրութեանց այս նպատաւո-
րումն ի վնաս բնիկ արտագրութեանց
և ինդիքը կը ներկայացնէ ուշադրու-
թեան Թեֆէֆէ Հաֆէթի խմբագրա-

պետ Աճմէտ Միտհաթ Եֆէնտի, որ կարգ մը յօդուածներ կը հրատարակէի ջատագովութիւն պաշտպան դրութեան սկզբանց։

ԱՄՈՒՄԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Ֆրանսական հիւպատոսական ատեանն իր անցեալ ուրբաթ առուր նըստին մէջ ամուսնալուծութեան վճիռ արձակեց Է ընդ մէջ Տր. Զամպալո-փաշայի և իւր կնոջ, ծնեալ Գասա-վէշ-Գի. Տիկին Զամպալո ի Լոնտոն կ'ապրի ամուսնէն հետո 21 տարիէ ի վեր։ Ամուսնալուծութեան խնդրագիրը մատուցուած էր եօթն ամիս առաջ երկու ամուսնոց հաւանութեամբ, և դատարանն ընդունելով երկուց կողմանց պատճառներն և նկատելով որ 21 տարուան պայմանաւորութեան համար, եթէ փախաւ ունենային, իր վճիռը տուեր է այդ նկատուածներով։ Այս վճիռով, ամուսինք յայտնուեալ են ըզրոյթի մասին և իրարու և Տիկին Զամպալո-փաշայի մը իրարու հակառակ պայտի պայտի անունը կրելու, այլ իր ընտանեաց անունը պիտի առնու։

Վերաքննիչ ատենի առեւտրական ճիւղը յունիսի մէկէն սկսեալ առաւօտները ժամ 5ին բացուելով ժամ մը ներքին խնդիրներով զբաղելէ յետոյ ժամը 6ին դատարան պիտի սկսի։

Իրաւագիտական վարժարանի բըն-նութիւնը պիտի սկսի յառաջիկայ չարաթիւ։ Վեհ. Սուլթանին հրամանաւ Այսթընի և Տիպտանիքի ինքնապաշտպան մէջ պատ-րաստուած ամեն տեսակ կերպաներէ մէկ մէկ նմոյշ ն. Վեհափառութեան պի-տի մատուցուին։

Դ. Գորաբանակի Ֆէրիք Զէրքէս Մու-սա փաշա անցեալ ուրբաթ օր մեռեր է ի իւր տանը։

Կիրակի օրը Շիւշիի Յունաց գերեզ-մանատան մէջ մարդու դիակ մը գտնուե-ցաւ, որ ատրճանակով անձնասպան եղած էր։

Երկուշաբթի օրը Թոփիանէի առ-ջեւ նաւակ մը ընկղմեցաւ։ Նաւակն, որ առաջատու բացած էր, հողմին սաստիկ-ութենէ շրջելով մէջ գտնուած երկու իս-լամ ուղեւորք և նաւավարը ծովն ինկան։ Ֆրանսական պահակ շոգենաւը վտանգը տեսնելով մակույկ մը դրկեց, որ միայն նա-ւավարը կրցաւ ազատել։ Իսկ ուղեւորք ծովուն մէջ անյայտ եղան։

Զմիռնիոյ Ուսթըն իրաւորոյն մէջ կը կացողներ թէ քաղաքին մէջ հաստատեալ սառի գործարարին շինութիւնն աւար-տած ինքնով բացումը մեծ հանգիստ տե-ղի ունեցեր է։ Այս գործարարը շինել տուած են Պետական խորհրդոյ անդամ Ապուլլահ Եֆէնտի, նոյն խորհրդոյ օգ-նական անդամ Շիւքրի պէյ և վաճառա-կան Պ. Փոսթըլի, որք մենաշնորհ ստա-ցած էին։

Տէլիք Օսման եւ Գարա Ապուլլահ անուն վրացի երկու աւազակապետներ անցեալները Շապին Գարախանի համ-տիցէ դաւաճակին շրջակայ Պէնի. Շէյխ Գիւրը մտնելով ոչխարի վաճառական ծաւ-լը օղլը Մուսթաֆան լեռը տարած եւ 1000 ոսկի փրկանք պահանջած են։ Մուս-թաֆա այդ ստակը հայթայթելու համար իւր աներորդին աւազակաց քով պատանդ ձգելով գիւրը վերադառնայ եւ յետոյ 100 ոսկի պատրաստելով աւազակաց կը դրկէ։ Սակայն այս վերջինք ստակն առ-նելով հանդերձ իրենց քով պատանդ ձգե-ղած մարդն սպաննելով, կը հեռանան այդ կողմերէն։

Մահաբադի վարչութեան ի նորոյ գնեալ Գալիլէ շոգենակին անունը, Վեհ. Սուլթանին հրամանաւ Այսթըն դրուեցաւ։ Այս շոգենակ այսօր փորձի համար կ'ընդուն-վի երթալ։ Շոգենակին մէջ պիտի գտնուին ծովային բարձրաստիճան սպայք որոց հա-ցիկերով մը պիտի տրուի։

Ներքին գործոց նախարարութիւնը իր հանգիստը դրած է ամեն կողմ թէ գէշը իրելու համար տրուած արտօնագրոց վրայ զբաղմունք փակցնել հարկ չկայ, և թէ

միայն հարկ է ըստ օրինի 40 փարանց գրողմունքով փակցնել այդ արտօնա-գրերն ստանալու համար կառավարու-թեան մատուցուած ծանուցագրոց վրայ։

Տէրաթի նախորդ կուսակալ Շաքիր փաշա, որ օգտագործութեան համար ին-ճիրքէյի կը գտնուէր, երէկ մեռաւ։

Պոլսոյ նախնական դատարանի Հու-գուգի առաջին ճիւղն յունիսի առաջին օրէն սկսեալ առաւօտները ժամ 5 ին պի-տի բացուի և 6 էն մինչեւ 10¹/₂ դատարան պիտի զբաղի։

Երմուսական նախարար Վսեմ. Յակոբ փաշա իւր ընկալութիւնը յենիգիւղ փո-խադրեց, ուր վարձած է Փափազեանց ծո-վեղերեայ ամարանոցը։

Հեռագրական և թղթատարական վարչութիւնը կը ծանուցանէ թէ Պոլսայի և Էնկիւրիի հեռագրատանց միջեւ գտ-նուած Պիլէճիկի և Էնկիւրիի հեռագրա-կան կայարանաց մէջ օտար լեզուաւ հե-ռագիրք պիտի փոխանակուին։

Տրապիզոնի Ֆրանսական հիւպատոս անուանուած է Պոմպայի հիւպատոս Պ. Կապլէն։

Ի Քիւլիւք Զէքմէճէ և ի Կէպլէ Ե-րուան ելած պաճարախոր բողոքովին ան-հետացած է։

Պիլիկի լրագիրն իւր հոգակաւոր կենդանաբանութենէն երկրորդ նմոյշ մը եւս կը ներկայացնէ իւր ընթերցողաց, ծա-նուցանելով որ Զէքմէ (2) կոչուած մար-դակեր անասուն մը նահանգին շրջակայքն երեւան ելած է և տղայոց վրայ կը յար-ձակի և թէ այս անասունն նոյն իսկ Պիլի-կիի քաղաքին թաղերէ միոյն ինչպէս նաև Զուքուր գիւղախմբին մէջ եւս երեւան ելած է։

Հետեւեալ նամակը զրկուած է մեզ հրատարակութեան խնդրանքով։

Պարտ անձին կը համարիմ հրապարա-կաւ ջերմ շնորհակալիքս յայտնել ձեր լը-րագրոյն միջոցաւ առ Տր. Պապանեան (ի Գաղաթիւ) որ ազատեց կինս՝ յոռի կեր-պով սկսուած և յոռի կերպով յառաջ տա-րուած ծննդաբերութեան մը յուսահատա-կան վիճակէն։

Տր. Պապանեան, ամէնէն տաքնապալի վայրկեան կոչուելով, հիւանդն ազատեց հազուադէպ ճարտարութեամբ։

Ուստի, անհունապէս երախտապարտ այս երկտաարդ ճարտարին, կուգամ, յանուն իմ և յանուն իմ կնոջս, հրապա-րակաւ երախտագիտութեան հաւաստիք ընծայել իրեն։

Ընդունեցէք և ին. և ին. ձՈՆ ԶԻՐՍԻ

Կ. Պոլս, 8 յունիս 1889

ՀԵՌԱԳՐԱԼՈՒԻՐ

ԱՅՈՒՆ ՀԱՎԱՍ

Պերլին, 6 յունիս
Սամայիլի խնդրոյն վերաբերեալ Դեսպանախորհրդին արգիւնքն յաղ-թանակ մը եղաւ Միացեալ Նահան-գաց համար։

Լոնտոն, 6 յունիս
Բարիզի անգլիական դեսպան Լորտ Լիդզըն ծանրապէս հիւանդ է։

Բարիզ, 8 յունիս
Չինուորական մատակարար Պ. Ռէքէր և պատերազմական գործոց նախարա-րութեան սպայակոյտի գնդապետ Պ. Ֆլաշա ձերբակալուեցան այսօր կ'ըսուի թէ մատ ունին Պուլանժէի գործին մէջ։

Բարիզ, 9 յունիս
Չինուորական մատակարար Ռէքէր արձակուեցաւ։ Գնդապետ Ֆլաշայի ձերբակալման լուրը սխալ էր։

Պուլանժէական ժողով մը տեղի պի-տի ունենալ այսօր յԱնկուլէմ. ոստի-կանութիւնն արգիւնքն այդ ժողովն, եւ ձերբակալեց Պ. Պ. Լակէն և Լէ-զան, երեսփոխանք, և զՊ. Տէռուլէտ։

Պերլին, 9 յունիս
Պարսից Շահն այսօր Պերլին հա-տաւ։

Բարիզ, 11 յունիս
Պ. Պ. Լակէն, Լէզան և Տէռուլէտ ընտան են տակաւին, և այսօր պիտի դատուին Անկուլէմի պատժական առ-եանին առջեւ։
Այս միջադէպ հարցապնդում մը յառաջ պիտի բերէ երեսփոխանաց ժողովոյն մէջ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԱԹԻՈՑ ՊՈՐՍԱ

Ղաաթիւ, 31 մայիս
Դաճէկաւ

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԳՐՈՑ	
3 ամիս Լոնտոնի վրայ (Պաշտպանի).....	110 5/8
3 » » (Վեհափաշայի).....	109 0/10
3 » Բարիզի » (Պաշտպանի).....	22 87 1/2
» » » (Վեհափաշայի).....	22 95

Օսմանեան ԲՈՆԱՍԻՍԻՒՄ

Երէկ երեկոյ քոչ. (Միաց. Բ. Սերբ)	18 11
Պարսկացի գոցուելէն վերջը »	18 11
Բերայի մէջ »	—
Առաւօտուն բացուեցաւ »	18 10
Կէս օրին »	18 12

ԻՍԹԻԳՐԱԸՍ ՏԱԽԻԼԻ

Երէկ երեկոյ	48 19
Այս առաւօտ	48 19
Կէս օր	17 32

ԸՆԹԱՅՔ ԱՐԻԹԵԼԻՈՑ

Փոխառութիւն	A. Սերբ	29 10
» » »	B. »	17 5
» » »	C. »	18 10

ԲԱՃՆԱՏԱՐԱՐ

Սոսիէթէ Դէնթըրալ.....	Անգլ. Լը	4 28
Քրէտի Դէնթըրալ.....	Օսմ.	9 16
Պանք ալ Դոնա.....	»	7 27
Սոս. Դանթ Է Կալէօր.....	»	4 36
Թրամուէլ.....	»	477 1/2
Բուսէլի երկաթուղի.....	Քր.	65 50
Օպիկական տը Բրիթիթ.....	»	—
Բաժնեկիւրթ Լալիթիթ.....	»	102

ԸՆԹԱՅՔ ԴԻԱՄՈՑ

Օսմանեան ոսկի.....	122	100
20 Ֆրանք.....	»	87 33
Անգլիական ոսկի.....	»	110 20
Ինքիթիւրալ.....	»	90 27
Քրիմից.....	»	51 20
Լուպի թղթագրամ.....	»	8 74
» արծաթ.....	»	77 25
Մէճ. արծաթ. (տարբ.).....	»	108 28
Վեցնց.....	»	104
Նիւզնց.....	»	104
Միթալիք.....	»	102
Թաւփիք.....	»	8 20

ԵՐԻՐՊԱՆԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 11 Յունիս ժամ 5 վայր. 15 երեկոյ	
Անգլ. քոնսոլիտ.....	98 5/8
Օսմ. » Սերբի բացուեցաւ.....	16 5/8
» » » գոցուեցաւ.....	16 15 1/16
» » » Ա.....	29 1/4
» » » Բ.....	17 1/8
» » » Գ.....	16 5/8

Օթման 1871.....	94
Փոխառութիւն 1877.....	100 5/8
Պանք Օթման.....	11 1/2
Իւրաքան Փոխառ. 1873.....	101 1/8
Երկաթական միացեալ (Ինքիթիւր).....	91 7/8
» առանձ. (Երկիթիւր).....	108 5/8
Տոյրա Սոսիէ.....	85 1/4
Տոմարիալ (Փոխառ. Բոշիլի).....	102 5/4
Փոխառականութիւն Բարիզի վրայ.....	25 37 1/2

ՎԵՆԵՐԱ, 11 Յունիս, ժամ 4 երեկոյ

Փոխառականութիւն Լոնտոնի վրայ.....	119 55
Օսմանեան երկաթուղի.....	36 80
» Իւթիթի բաժնեկիւրթ.....	114
Բարիզ, 11 Յունիս ժամ 3 վայր. 45 երեկոյ	
Փոխառականութիւն Լոնտոնի վրայ.....	194 65
» 3 » 1/10.....	86 65
Օսմանեան քոնսոլիտ Սերբի բացուեցաւ.....	16 92 1/2
» » » գոցուեցաւ.....	16 95
» » » Բ.....	—
» » » Գ.....	16 75
Օսմանեան երկաթուղի.....	65 75
» Իւթիթի բաժնեկիւրթ.....	—

Պանք Օթման.....	540
Կրէտի Լոնտոն.....	630
» Փոնիթ.....	1340
Գոնթուառ տիւրք.....	90
Սուլթիք Զրաշք.....	2372 50
Իւրաքան 5 1/10 1877.....	—
Իւրաքան Լոնտոն.....	97 40
Սպանիական (արտաքին).....	76
Երկաթական միացեալ.....	462 50
Բրիթիթի Թիւրք.....	459 37 1/2
Հեղեղական 5 1/10.....	477 50
Զէք Լոնտոնի վրայ.....	25 18

Կ. ՊՈԼԻՍ, 31 ՄԱՅԻՍ, 1889
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊԵՐ

ԱՅՍ ԱՌՈՒՐ ՍՈՒՐԶԱՆԴԱԿԱՆ

Պարսկաստանի Շահն այս կիրակի Պեր-լին հասաւ։ Վերջէմ Կայսր կայսրանէն ընդունեց իւր հիւրը։ Նոյն օրը շեղ հա-ցիկերով արուեստա Պէլիկի դիւանին մէջ, ուր կը բնակի Շահն, Հետեւեալ օրն, եր-կուշաբթի, Շահը զնաց Ֆրիտիլիսքոնի դիւանին, ուր Ահիւսթա-Վիթթորիա կայսրուհին ընդունեց զինքը, Կայսեր և Կայսրուհին հետ փոճաւոր գնաց, ուր նախաճաշն ըրաւ, և յետոյ շոգենաւով Շարլթիէնպուրի անցաւ։ Շահն ընդունեց արքայազուն իշխանաց և Պիլիկի իշխա-նին ու Մոլթիքէ կոմսին այցելութիւններն, և փոխարարած այցելութեան գնաց, Երէկ, երեքշաբթի, Շահը ներկայ պիտի գտնու-նուէր թնդանօթաճիք փորձերու ի թէ-կէ, և երէկ իրիկուն ի պատիւ իրեն շը-քեղ ներկայացում մը պիտի տրուէր Օթե-րայի թատրոնին մէջ։ Կարգադրուած է որ Ն. Վեհափառութիւն այսօր մեկնի Պերլինէ։

Պերլին, 7. — Աստ կը սպասուի Պ. Մոնշիքու, որ լիազօր իշխանութիւն ու-նի կարգադրելու այն փոխարինութեան գումարը զոր սերպ կառավարութիւնը պարտի վճարել Ֆրանսական ընկերու-թեան։ Ֆրանսական դեսպան Պ. Փաթիթ-մանի պիտի աջակցի Պ. Մոնշիքուին։

Փէլիք-Կէլ, 7. — Պուլիքի կը ծա-նուցուի ուսու լրագրաց թէ ուսման կա-ռավարութիւնը գոհացում տուաւ Ռու-սիոյ արտաքինաւ ուսու պատկերավաճա-ռաց խնդրոյն մէջ։ Արտաքինաւ հրամա-նագիրը շնորհեցաւ, և պատկերավաճառ-ներուն դրամական հատուցում պիտի լինի։

Յունիս 7ին բուռն փոթորիկ ի Լոն-տոն։ Ստորին թաղերն ողողեցան։ Կայ-ծակն շատ մը արկաններ պատճառեց։ Նիւթական փնտր բաւական մեծ է։

Չարին որդի կ'ստանայ մեծ դուքս Գրոնշտատէ մարտանաւ մը նստաւ աշ-խարհի շրջանն ընկելու համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԼՐՈՑ

Փէլիք, 7 յունիս. — Թաւ կը ծանու-ցանէ թէ ոստիկանութիւնը գործարար Պու-լանժի թուղթերը գրաւեց ճիւղ այն վայրկեանն ուր կ'ուզուէր Լոնտոն զրկել զայն։

Չնչեպէս, 7. — Գերման զրաշաւոր նաւախմբին կողմէ արիւրիկան եղբրաց ընկիներուն դէմ մղեալ ճակատամարտ մը ետքը, գերման պատուիրակ Վիսման գրաւեց և այրեց զլիառատանի և Ուլիմի, Գերմանաց կողմէ զինուոր մը սպաննե-ցաւ, և սպայ մը, երթաւայ մը և վեց սեւաւորներ թիթեւապէս և երթաւ-պայ մը և Զուլու մը ծանրապէս վիրա-ւորեցան։ Խնամուոյն կորուստները ծա-նօթ չեն տակաւին։

Փէլիք, 7. — Անգլ. դեսպան լրաւ Լիթթըն, որ վերջերս վիրաբուժական գոր-ծողութիւն մը կրեց, ապաքինութեան ճամբու մէջ է։ Այսօր ի Պրէսթ սաստիկ երկրաշարժ մը տեղի ունեցաւ, մեծաքը-ղորդ աղմուկի մը հետ, հիւսիսէն ի հա-րաւ։ Մնացումը նման էր խոշոր թնդա-նօթի մը արձակմամբ յառաջ եկած շարժ-ման։

Փարիզի քաղաքային խորհուրդն յու-նիս 2ի գիշերն հացիկերով տուաւ ի պա-տիւ անգլիացի գործաւորաց պատուիրա-կութեան, որ Փարիզ զրկուած է հանրա-յին հանգանակութեամբ։ Արուեստահա-նգիին նորութիւնները ընկելու արհեստա-կան տեսակէտով. Փարիզի քաղաքային խորհրդոյն գեր-նախագահ Պ. Ժոֆրէն բաժակ առաջարկելով ի պատիւ հիւրե-րուն, ըստի գուրտու մաղթեց անոնց, իբրեւ առաջին պատուիրակութիւն օտա-րագի գործաւորաց որ կուգայ տեսնել Արուեստահանգիին։ Անգլիացի պատուի-րակաց զլիառուոյն ալ բաժակ առաջարկեց Ֆրանսացի և անգլիացի գործաւորաց մի-ութեան ու համարաշխուժեան։

Նիւ-Յորք, 7. — Ուստիկանի Նահան-գին Սէթլ քաղաքին մէջ հրդեհ ծագելով, 10 միլիոն տոլարի վնաս պատճառեց։

Լիւպա, 7. — Փորթուկալի Մերակոյտը քուլարիկց բանաձեւ մը, որով կառավա-րութիւնը կը հրահրուի ազդուապէս պաշտպանել արեւելեան եւ հարաւային Աֆրիկէի մէջ Փորթուկալի ստացեալ իրա-ւունքներն։ Այս քուլարիկութիւն ուղ-ղեալ է Անգլիոյ դէմ, որ, ինչպէս յայտնի

է, կը խորհի Գաղթային մեծ Ընկերութիւն մը հաստատել, որուն կ'ուզուի յանձնել Արիւնդի բոլոր ներքին մասերուն կառավարութիւնը, սկսեալ Ներքին աշխատանքէն մինչեւ Բարեկարգ շրջանառութիւնը (Այս խորհուրդ մեծապէս ուշադրութիւն կը դրաւ այս միջոցին ոչ միայն յԱնգլիա և ի Փորթուկալ, այլ և ի Ֆրանսա և ի Գերմանիա):

—Պէրլէ, 6.— Վերջէն կայսր նաւատորմին համար իւր հոգածութեան մէջ նոր ապացոյց տուաւ՝ եկեղեցական իշխանութեանց փափաք յայտնելով որ նաւատորմին վերաբերեալ սովորական աղօթքի բանաձեւը փոխելի ստալէս: «Ո՛վ Աստուած, պաշտպանէ՛ր արքայական բանակը և գերմանական համայն ոյժերը ցամաքի և ծովու վրայ, մանաւանդ ճամբորդող նաւերն»: Այս բարեփոխեալ բանաձեւ արդէն կը գործածուի զինուորական պաշտամանց մէջ, և անխորտակ մեծ զեղեցեաց ժամերգութեան մէջ զայն մեծածանելու համար, Ընդհանուր Սինոդին հաւանութեան կը սպասուի:

—Փէրլէ, 6.— Աւելի քան 150 մարմնամարդիկներ Փարիզ գացին յատուկ կառավարով:

—Պէրլէ, 7.— Պիզմարը իշխանին թերթը, Նոր Տէրէն Ալ. Ջայնսն, գառն բանիւք կը խօսի Ձեռնարկ վրայ, որք Ֆրանսայի հետ կ'ըզայրարկեն: «Կը տեսնուի թէ այս մարդիկ ո՛րպիսի խնամ կը տանին գերման տարրին և գերման քաղաքակրթութեան դէմ իրենց հակառակութիւնն արտայայտելու: Երկրայեղի է որ չեմ կուսակցութեան պետերը կարենան զիմադրել այս ծայրայեղ տարբերաց յարուցած հոսանքին»:

—Պերկրատի մետրապոլիտ Գեր. Թէոփոս Արքեպիսկոպոս, Միլան թագաւորին ընտրեցող, որ տեղի կուտայ իւր օրինակ որ նախորդէ Միլանյէ Արքեպիսկոպոսին, այս օրերս կը մեկնի Սերպայէն, վանք մը քաշուելու համար յաւատարմական Սերպայ, ուր ծնած է:

Փէրլէ, 8 յունիս.—Նախարարաց խորհրդին մէջ, ներքին գործոց նախարար Պ. Բոնիֆոն տեղեկութիւն տուաւ այն խուզարկութեանց վրայ, յորա Ջոր. Պոլան Ժէի կարգ մը թուղթերը բռնուած են, թա՛ն կ'ըսէ թէ այս թուղթերն են Պոլան Ժէի երեսուն հազար (30.000) հատ նամակներ, որք կը պարունակեն անուններն այն ամեն անձանց որոց հետ յարաբերութեան մէջ էր գործակարգը:

—Ձեռնակորայի իշխանն իւր նշանուած դստեր՝ Միլիճա իշխանուհոյն՝ հետ փեթերապոլիսէն Վիեննա գնաց:

—Պէրլէ, 9.— Խնամակալներն երէկ ստորագրեցին հրամանագիր մը, որով Պերկրատի մետրապոլիտ Թէոփոս, Նիշի մետրապոլիտ Տէմէթիոս և Ջիբայի մետրապոլիտ Նիքանոր իրենց խնդրանքը կը հրաժարին և հանգստեան կը կոչուին, և Միլանյէ արքեպիսկոպոս՝ ազատէն վերադարձած՝ կը վերահաստատուի Պերկրատի մետրապոլիտութեան մէջ, նամանակէս Հերոնիմոս եպիսկոպոս՝ Նիշի մետրապոլիտութեան մէջ:

—Պէրլէ, 8.— Փարիզէ կը հեռագրուի առ Քէրէյ Ջայնսն. «Աստ ի Փարիզ կը կարծուի թէ ոչ միայն Ձեռնակորայի իշխանն, այլ և Ջարը ծպտեալ պիտի գայ շրջիլ Արուեստահանութեան: Այնքանք որ հատնորէն պիտի անսակցի իւր քննեկալին՝ կալէսի իշխանին հետ, որ երեւելի կերպով մը Փարիզ կուգայ ի բացահայտութեան անգը: Դեռ պահին: Կալէսի իշխանը ջերմ կուսակցի եղած է միշտ սերտ համաձայնութեան մը Անգլիոյ, Ռուսիոյ և Ֆրանսայի միջև»:

—Լիւթէ, 9.— Գերեաց տուրեաւը ջնջելու համար միջադէպին դեռ պահախորհուրդն աստ պիտի բացուի օգոստոս 4-ին, և պիտի տեսնէ մինչեւ օգոստոս 11:

—Պէրլէ, 8.— Նա, Ձեռնակորայի իշխանին ի պատիւ կայսերական բաժակահաճոյն առթիւ, կ'ըսէ թէ Ջարը պարգաւէս ստամական դէպք մը հաստատած է՝ Նիքոլա իշխանն անուանելով «միակ համարիտ բարեկամ Ռուսիոյ»: Միջադէպին քաղաքականութեան փոփոխմամբ, ժամանակ եղած է որ Մեծ Տէրութեանց

ամեն մին Ռուսիոյ թշնամի հանդիսացած է: Ռուսիոյ զինաց ապերախտութիւնը ցուցուած է հոն ուր երախտագրութեան իրաւունք ունէր: Միայն փոքրիկն ու գիւցազնն Ձեռնակորա միշտ անխախտ անձնութիւնն մը ցուցած է Ռուսիոյ, և այս պատճառաւ Ձեռնակորա բացառիկ դիրք մը բռնած է ամեն Ռուսի սիրտին մէջ: Ջարը զայս և եթ յիշեցուցայն օրն ուր Նիքոլա իշխան, որ ցարդ քաղաքական դաշնակցի մ'էր, կայսերական գերագոտանին անգամ կը լինէր:

ՍԵՐՊԻՈՅ ԵՐԿԱՌՈՒՂԻՔ

Հանրապետութեան նախագահ Պ. Բառնո Բալէի նոր նաւահանգստին բացման հանգէսէն ի Փարիզ վերադառնալուն, նախարարաց խորհուրդ մը գումարեցաւ, յորում քննուեցաւ Սերպիոյ երկաթուղեաց գրաւման խնդիրը: Պ. Սիւրլէր պատմեց իրողութիւններն և հարգելեց ստացած հեռագրերը: Կ'երեւի թէ սոյն սերպիական երկաթուղոյն պաշտօնէութիւնը կը բաղկանայ միայն 17 փրանսալիներէ և 320 Աւստրիացիներէ:

—Պերկրատէ կը ծանուցուի թէ սերպ պետութեան երկաթուղեաց վարչութիւնը կազմուած է ստալէս. ընդհանուր անօրէն Պ. Տմիթի Սիւրլանովիչ: Հսկողութեան և շահագործման պետ Պ. Միլանյէ Բրիսթիչ: Գոյից պահպանման պետ Պ. Նաուլտ. հաշուակալութեան պետ Պ. Պ. Վիլիթէր և Սալիլ: չղեկաւաց կայսրանին պետ Պ. Նիքոլա Փրիթիչ և մեքենայից ճիւղին պետ Պ. Միլան ֓եթրովիչ:

—Թէ և սերպ կառավարութիւնը վերջնապէս ստանձնեց երկրին երկաթուղեաց շահագործումը, բայց Ֆրանսական ընկերութիւնը տակաւին ջանքեր կ'ընէ՝ եթէ ոչ շահագործումն իւր ձեռքն անցունելու համար վերստին, գէթ նիւթական փոխարինութեան մը կարեւորագոյն իրաւունքներ ստանալու համար: Ընկերութեան կողմէ կ'ըսուի թէ օտար կառավարութիւն մը, (Աւստրիա) որ բոլոր արեւելեան գիծերը ձեռքն անցունել կը խորհի, միշտ է սերպ կառավարութիւնն՝ ըստանձնել իւր երկաթուղեաց շահագործումն, այնու համոզմամբ թէ քիչ ժամանակէն Սերպը, չլինալով գործին մէջէն ելնել պիտի հրկիւզուին աստիճան վարչութեան մը յանձնել գայն: Սերպիոյ արտաքին գործոց նախարարութիւնը կը պնդէ թէ Ֆրանսական ընկերութեան արարք հակառակ էին պայմանագրութեանց: Թէ ընկերութիւնը տարօրինակ շահեր կ'ընէր, որք բնաւ համեմատական չէին Սերպիոյ տնտեսական վիճակին, և ընկերութեան վարչութեան մէջ զանազան խարդախութիւնք և գողութիւնք երեւան ելած են, որոց հոշակումն ոչ նուազ դայթակողութիւններ պիտի պատճառէ: Եթէ Ֆրանսական ընկերութեան ընթացքն օրինակը կ'ընէր, սերպ փողովքեան հանրային զգացումն այն աստիճան գրգռուած չպիտի լինէր ընկերութեան դէմ: Սերպ կառավարութիւնը չընդունիր բնաւ որ իւր տնօրինութիւն հակաֆրանսական զգացման վերագրուի: զի Ֆրանսա միշտ ջերմաբն համակրանք վայելած է և կը վայելէ Սերպիոյ մէջ: Բարձրաստիճան սերպ պաշտօնատար մը հաւաստած է թէ պաշտօնէից մէջ ընտրութիւն պիտի լինի, և բնաւ գերման, աւստրիացի և կամ մահառ պիտի չլծուի, բայց Ֆրանսացի եւ ուրիշ ազգէ պաշտօնեայք պիտի պահուին:

—Սերպիոյ երկաթուղեաց բաժնեթուղթ մեծաւ մասամբ օտարազգեաց ձեռքն են: 32.000 բաժնեթուղթերէն 15.000ը կը գտնուին Պ. Վիլիթի ձեռքն, որ անմիջական շահագործումն ստանձնած էր, և իտալացի է: 5.000 բաժնեթուղթ ձեռքն էր Բարոն Բարոնի, ի հաշիւ Գերմանիոյ: 7.000ը Վիեննայի Լէնտրպանքի քով են, և միայն 5.000 բաժնեթուղթ, որ ծախուած են անկէ ի վեր, կը գտնուին ի ձեռս դժբախտ Բոնիֆոն: Եթէ ընթացքը պահուի, պաշտպանելով այս երկաթուղեաց գործին մէջ Ֆրանսական ընկերութեան շահերն, աւելի օտարազգեաց շահերը կը պաշտպանէ: Այս է անշուշտ

պատճառն որ Պ. Սիւրլէր շատ կտրուկ միջոցներու չի դիմեր Պերկրատի կառավարութեան դէմ:

—Միլան թագաւոր 10.000 ֆր. յանձնեց Սերպիոյ «Արքայական Ակադեմիային», որոյ հիմնադիրն և պաշտպանն է:

—Նալէ Ֆրէյ Գէրէ կը ծանուցանէ թէ սերպ կառավարութիւնը կառավարող երկաթուղին համար նոր կանոնագիր մը որոշած է, որ յուլիս 1-էն պիտի սկսի գործադրիլ: Այս նոր կանոնագրոյ հետեւանքը պիտի լինի 24 ժամ անընդմեջ եւրոպիոյ հեռագրութիւնը: Պոլսէ կամ Սերպիոյ Թղթարեք կառավարութիւնը 12 ժամ միայն պիտի յապաղի: Բայց ուղեւորք պիտի հարկադրին գիշեր մը անցունել ի Պերկրատ և ուրիշ գիշեր մը սահմանադրելի վրայ, ի Ջարպրոտ կամ ի Ռիսթովաք: Բայց այս կայսրանաց երկուքն ալ գրէթէ անապատի մէջ են: Ուղեւորք թէ իրենց անձնական հանգստեան և թէ մանաւանդ ապահովութեան համար պիտի հարկադրին հրաժարիլ այս ճամբէն: Նալէ Ֆրէյ Գէրէ, որ Սերպիոյ այժմեան կառավարութեան հակառակորդ թերթ մ'է, կը յարէ թէ շահակցի պետութեանց պարտականութիւնն է սերպ կառավարութեան յիշեցնել իւր յանձնառութիւններն արեւելեան երկաթուղեաց միացման առթիւ:

Քրէյ, 6 յունիս.— Բառաստեւ ուսանողները դրօսական պոյոյ մ'ըրած իրենցով ուսանական հողի վրայ, ձեռքադալեցան ու բանտարկեցան՝ ինչ ինչ երգեր երգելուն համար: Ընթերցասիրաց տկարեմական միութիւնն հայցեց Աւստրիոյ արտաքին գործոց նախարարին և լեհական խորհրդարանական ակմբի նախագահին միջամտութիւնը:

—Պերլէ, 5.— Սերպ կառավարութիւնն օտար ընկերութեան մը տուաւ թիմը գետի հովտին մէջ երկաթուղեաց շինութեան արտօնութիւնն՝ առանց երաշխաւորելու հասցիքը, կամ գործածուելիք դրամագլխին տոկոսը:

—Սերպ կառավարութեան Ֆրանսական ընկերութեան ձեռքէն երկաթուղիներն ետ առնելուն առթիւ, դիմել կը տրուի թէ ծխախոտի և աղի մեքսիկականներն եւս օտարաց ձեռքէն ետ առած էր անկէ յառաջ:

—Արուեստահանքիս յաջողութիւնն եւս քան զեւս ակնեւ է: Մայիս ամսուն մէջ, 1878 ի Արուեստահանքիսին, վճարեալ մտից համազուտման էր 1.266.675, մինչ այս տարի մայիս ամսոյ մէջ վճարեալ մուտքերն հասան 2.208.045 ի, որ ըսել է 938.370 մուտք աւելի եղան այս տարի, թէեւ 1878 ին Արուեստահանքիսը բացուած էր մայիս 1-ին, և այս տարի մայիս 6-ին բացուեցաւ:

—Նորակազմ Բոնիֆոն տէրքն ինքն ստանձնեց վճարել ուսանական 4% նոր փոխառութեան տոկոսի կտրոնները: Կը յիշուի թէ հին Բոնիֆոն տէրքն մեքսիկոյն էր Փարիզի հրապարակին վրայ վճարել ուսանական փոխառութեան տոկոսներն ի հաշիւ ուս կառավարութեան: Նորակազմ Բոնիֆոն առ նաեւ հելլէն կառավարութեան հետ բանակցութեան մէջ է՝ ըստ առաջնոյն Գոնեստանի սեղանադրական միջնորդութիւնը կատարելու համար Փարիզի հրապարակին վրայ:

Երկաթուղի եկած՝ վերջին լուրեր կը ծանուցանեն թէ իտալիկներ կուրս սրբիւք: Ապագայ տէյ և Մէհմետ Ալի տէյ, Փարիզի երթեւեկի Արուեստահանքիսը տեսնելու:

—Լոնտոնի Լորտ Բաղադարպետ Պ. Հուայթէտ ի Փարիզ աչքէ անցուց Փաթիթօրեան հաստատութիւնն, և ի մօտոյ Լոնտոնի մէջ Բիլէ-Գի մը պիտի նախագահէ: Նմանօրինակ հաստատութիւն մը հիմնելու համար ի Լոնտոն: Անգլիացի բժշկիներէ շատեր հակառակած էին Փաթիթօրեան մէթոտին, որ հիմա Մեծին Բրիտանիոյ մէջ եւս պաշտօնական պաշտպանութիւն կը վայելէ, չնորհիւ իւր յաջող արգելանք:

—Այս վերջին օրերս, Պապը, քաղաքային անձնաւորութեանց ոմանց հետ խօսակցելով, զանգատներ է որ Աւագերթօ

թագաւորին ի Պերլին այցելութեան ինչ ինչ պարագայք, որպէս եւ վերջէն Բ. Կայսեր ի Հռոմ այցելութեան ինչ ինչ պարագայք, Հռոմայ Աթոռոյն դէմ եւ իւր պապական անբռնարարելի իրաւանց գէմ ցոյցի մը երեւոյթն առած են:

—Լոնտոնէ կը ծանուցուի նոր խոթգոթութիւն մը, հաւանորէն գործ մի և նոյն անգամին որ անցեալ տարի քանի քանի կիներ յօշոտեց ի Հուայթէտի թագ: Գոնեստ Գիլ Լոնտոնի կամուրջներէն միոյն մօտ իրարմէ բաւական հեռաւորութեամբ գտնուեցան երկու ծրարներ, որք կիսով մը յօշոտ պատառուած դանաղան անգամները կը պարունակէին: Բժիշկները կը վկայեն թէ այս անգամը կը վերաբերին իւր 25ամեայ կնոջ մը, որ վիժման գործողութեան մը ենթարկուած պէտք է լինի կանխաւ: Մարմինը կտրուած էր անգամահատութեան անփորձ մարդու մը ձեռամբ, և ոճիրն ալ հազիւ 24 ժամ յառաջ գործուած պէտք է լինի: Կը կարծուի թէ կնոջ գլուխն այրած են, ոճիրն հետքը չլծողու համար Ոստիկանութիւնը բան մը չլրցաւ գտնել, ինչպէս չէր կըրցած գտնել Հուայթէտի ի ոճրագործը կամ ոճրագործները:

Աղետարէ նկարագրութիւններ կուգան ծոնթառու քաղաքին ողորման պարագայից վրայ: Կարի սրտաշարժ էր տեսնել հոսանքէն բռնուած և խորտակուած բնակարանաց բեկորներուն վրայ հայրեր, մայրեր, զանաւանք, քոյրեր և եղբայրներ, որք իրարու օգնութեան հասնիլ կը փութային, երբ աւելի սրընթաց և աւելի խոշոր բեկորներ կուգային ամենքը ջախջախել և խորատուգլէ: Զուրբերուն վրայ հազարաւորներ օգնութիւն կ'աղաղակէին, և անկարելի էր օգնել զի հեղեղներն ամեն ինչ քշած տարած էին, նոյն իսկ երկաթուղեայ գիծերն ու կամուրջներն, և անոնք անգամ որք ծովու մէջ կրնային լողալ, հազար տեսակ բեկորներով բռնաւորեալ այս անձնաբնակարան սրընթացի իրենց պաղարիւնն և անակնկալ կերպիւ մահ կը գտնէին ամեն կողմ ծոնթառու, որ 30.000 բնակիչ ունէր և երկաթի մեծ հանք և գործարաններ կը բանեցնէր, հիմնադրատակ կորած է: Կանգուն մնացած են միայն եօթն շէնքեր, որոց մին մեծ դպրոց մը, մին գրաստուն մը, մին կառավարական պաշտօնարան մը, մին ալ երկաթի մեծ գործարան մը, որ Միաց. Նահանգաց մէջ մեծագոյն գործարանն է կ'ըսուի: Փշնսկիմանիոյ կուսակալութիւնն ամենէն առաջ փութաց օգնութիւն դրուել, — գործաւորներ, շինուածանիւթեր, առատ պաշտանք, չղեկաւորք և՛ տըխտէր պարագայ 2.000 հատ ալ դադալ: Ծոնթառուի հետ հիմնադրատակ կորան ուրիշ եօթնուութ աւաններ կամ քաղաքներ, որք հանքագործ և արհեստագործ մեծ բազմութեան մը կեդրոն էին: Նիւթական վիտան՝ աւելորդ է ըսել՝ միլիոնաւոր ոսկովք կը հաշուի: Ամենէն կարեւոր նահանգաց մէջ անմիջապէս հանդանակութիւնք բացուեցան, որոց շնորհիւ տարակոյս չկայ թէ ողջ մնացեալք պիտի հոգացուին: Բայց ո՞վ պիտի հոգայ հազարներով կորած հոգիներն, և անթիւ սուգերն ո՞վ պիտի սփռի:

—Աւագանն որ յանկարծ պայթելով ողորդեց զծոնթառուն՝ Միացեալ Նահանգաց մէջ գտնուած արուեստական մեծագոյն լինէր: Զուրն հոն կը համբարուէր երաշտութեան տարուց մէջ պրտներ ուռալով ջրանցի մը և գործարան մը: Եւ Սերպ հայթայթելու համար՝ վերջէս շուրջ փոթորիկներէն այս աւագան շատ լեցուած էր, և 700 ոտք երկայնութեամբ և 100 ոտք բարձրութեամբ թուրքն, որ քաղաքը կը պաշտպանէր աւագանին դէմ, յանկարծ խախտեցաւ և պայթեցաւ: Օր առաջ իմաց տրուելով պատմարին խարխուլ վիճակը, բնակչաց մէկ մասը չուեղութեամբակ ունեցաւ: ապա թէ ոչ, աղէտն աւելի եւս մեծ կը լինէր:

Արտօնատէր

Կ. Ս. Իիփիլիպիս